

ՔԱՂՎԱԾՔ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքից

ՀՈԴՎԱԾ 169.17. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՄԵՋ ԿԵՂԾ ՏՎՅԱԼՆԵՐ ՄՏՑՆԵԼԸ ԿԱՄ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Ֆիզիկական անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրի մեջ գույքի կամ եկամուտների վերաբերյալ կեղծ տվյալներ մտցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից մինչեւ քսանհինգապատիկի չափով, իսկ քաղաքական կամ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց համար՝ հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով:

Հայտարարագիրը հարկային մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է նախազուշացում:

Նախազուշացումից հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարագիրը չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, իսկ քաղաքական կամ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց համար՝ երկուհարյուրապատիկի չափով:

ՀՈԴՎԱԾ 327.1. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Օրենսգրքի 169.17 հոդվածով սահմանված պատասխանատվությունը «Ֆիզիկական անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պաշտոնատար անձ չհամարվող, փոխկապակցված անձ չհամարվող եւ «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան եկամուտների մասին հաշվարկ ներկայացնող չհամարվող ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվում է 2010 թվականի հունվարի 1-ից: